ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսականաջակցությամբ«Իրավաբաններիհայկականասոցիացիա» հասարակականկազմակերպությանղեկավարությամբկոնսորցիումովգործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Քաղաքացիականհասարակությանինստիտուտ» հասարակականկազմակերպությանկողմից՝ իր գործընկերներ «Աստղացոլք» ՀԿ-ի, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն պրոբացիային ազգային ցանցի կարողությունների զարգացում» ծրագրիշրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ

Ռազմավարական պլան

Երևան, 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեսական 4

2. Կոալիցիայի շահառուները և նրանց տրամադրվող ծառայությունները 4

3.Աշխատանքային պլան 6

4.Շահերի պաշտպանության պլան 10

5.PR առաջնահերթություններ և արշավներ 12

6. *Ֆոնդահայթայթում և Ցանցի զարգացման պլան* 13

7. Մշտադիտարկող խմբի ռազմավարական պլան 14

8. . Ցանցի պրոբացիայի ոլորտի հանրային քաղաքականությունների մշտադիտարկման և բարելավման պլան 14

1. Տեսլական

Համերաշխ և ապահով հասարակություն՝ կայացած վերականգնողական արդարադատության համակարգով:

2. Կոալիցիայի շահառուները և նրանց տրամադրվող ծառայությունները

1. Դատապարտյալ	Աջակցություն – Սոցիալական – Հոգեբանական – Իրավական – Նյութական
2. Պրոբացիայի ծառայողներ	Կարողությունների զարգացում – թրեյնինգներ, մոնիտորինգ, քարտեզագրում Մեթոդական աջակցություն – ռազմավարության և գործիքների մշակում Նյութատեխնիկական աջակցություն – տեխնիկա, գույք
3. Տուժող կողմ	Հաշտարարություն
4. Արդարադատություն իրականացնողներ	Կարողությունների զարգացում – թրեյնինգներ, փորձի փոխանակում – համագործակցության զարգացում – ընդհանուր գիտելիքի և մոտեցումների ձևավորում – Վերականգնողական արդարադատության ինստիտուտի ներդրում
5. Համայնք	– Իրազեկվածության բարձրացում – Համայնքային վերականգնողական կենտրոնների ստեղծման լոբբինգ – Համայնքային կառույցների կարողությունների զարգացում
6. ՏԻՄ	– Կարողությունների զարգացում – Հանրային աշխատողների ներգրավում
7. Ընտանիք	– Սոցիալական – Հոգեբանական – Իրավական – Նյութական
8. Ազգային ժողով	– Իրազեկում – Օրենքի նախագծեր

	– Փորձագիտական խորհրդատվություն
9. Կառավարություն	– Մեթոդական աջակցություն – Օրենքի նախագծեր – Ռազմավարությունների մշակում, լրամշակում, գործիքների մշակում – Փորձագիտական աջակցություն – Մեխանիզմների մշակում և ներդրում

3.Աշխատանքային պլան

	Շահառու	Գործիք	Կատարող	Պատասխանատու	Ռեսուրս	Ժամանակ
1	Դատապարտյալ	Սոցիալական • Կարիքի գնահատում • Կարողությունների զարգացում • Մշակութային միջոցառում • Ուղղորդում- աշխատանքի , կրթության հետ կապված	• <<Սոցիալականադարություն>> • <<Ընդդեմիրավականկամայականության>> • <<Ընտանիքևհամայնք>> • <<Աստղացոլք>> • <<Հայաստանիմանկականասոցիացիա>>ՀԿ	<<Սոցիալական արդարություն>> ՀԿ	• Սոցիալական աշխատող • Տարածք • Նյութական աջակցություն	1 Ամիսը 10 շահառու
		Հոգեբանական • Խորհրդատվություն • Խմբային աշխատանքներ • Անհատական աշխատանքներ	• <<Սոցիալական ադարություն>> • <<Ընդդեմ իրավական կամայականության>> • <<Աստղացոլք>>		Մասնագետ Տարածք Նյութեր	1 ամիսը 10շահառու
		Իրավական • Իրազեկում • Խորհրդատվություն • Փաստաթղթերի կազմում • Ուղղորդում գործընկեր ՀԿ-ներ	• <<Նոր սերունդ>> • <<Սոցիալական ադարություն>> • <<Ընդդեմ իրավական կամայականության>>		Մասնագետ տարածք	1 ամիսը 4 անգամ 1 ամիսը 15 անգամ
2	Տուժող	Իրավական • Իրազեկում • խորհրդատվություն	• <<Նոր սերունդ>> • <<Սոցիալական ադարություն>> • <<Ընդդեմ իրավական կամայականության>>		Մասնագետ տարածք	1 ամիսը 5 անգամ

		Հոգեբանական • խորհրդատվություն	• <<Սոցիալական ադարություն>> • <<Ընդդեմ իրավական կամայականության>>		Մասնագետ Տարածք	1 ամիսը 3 անգամ 1 ամիսը 5 անգամ
3	Պրոբացիայի ծառայող	Կարիքների գնահատում • Հարցազրույց • դիտարկումներ	• <<Նոր սերունդ>> • <<Սոցիալական ադարություն>> • <<Ընդդեմ իրավական կամայականության>> • <<CSI>>	<<CSI>>	փորձագետ	
		Կարողությունների զարգացում • Թրեյնինգ • Փորձի փոխանակում • Փորձագիտական խորհրդատվություն	• <<Նոր սերունդ>> • <<Սոցիալական ադարություն>> • PH	PH	Փորձագետ Տարածք Նյութեր	3 ամիսը մեկ 1 ամիսը 3 անգամ ընթացիկ
		Մեթոդական աջակցություն • Գործիքների ստեղծում • Ուղեցույց • Մոդուլների մշակում	• <<Սոցիալական արդարություն>> • **<<CSI>>** • PH • <<Ընդդեմ իրավական կամայականության>> • <<Հայաստանի մանկական ասոցիայի>>	<<CSI>>	Փորձագետ Տարածք նյութեր	1 տարին առնվազն մեկ անգամ

	Շահառու	Գործիք	Կատարող	Պատասխանատու	Ռեսուրս	Ժամանակ
4	ՊՊԾ, ԱՆ	Ռազմավարության մշակում • Նախնական տարբերակի մշակում, • Նախնական տարբերակի տրամադրում միջազգային փորձագետների • Մարտի 24-30 միջազգային փորձագետների հետ աշխատանքային հանդիպում, նախագծի ամբողջացնում	• ՊՊԾ- ռազմավարության նախագծի նախնական տարբերակի պատրաստում • CSI- միջազգային փորձագետների հետ կապի հաստատում, նախագծի թարգմանության տրամադրում, կոորդինացում, աշխատանքային հանդիպման կազմակերպում • Ցանցի անդամ կազմակերպություններ – Նախագծի վերաբերյալ կարծիքների տրամադրում, ՊՊԾ աշխատակիցների, միջազգային փորձագետների հետ աշխատանքային հանդիպումների մասնակցություն	CSI	• Նյութական ռեսուրսներ նախագծի թարգմանության համար • Նյութական ռեսուրսներ փորձագետների ճանապարհածախսի, հոնորարի համար • Նյութական ռեսուրսների	• ՊՊԾ-ն կներկայացնի ռազմավարության նախնական տարբերակը մարտի 18-19 • Նախնական տարբերակի տրամադրումից հետո թարգմանել և ուղարկել փորձագետներին 19-22 • Աշխատանքային հանդիպման կազմակերպում միջազգային փորձագետների հետ մարտի 24-30
		Փորձագիտական օգնություն • Վաղաժամկետ	Ցանցի անդամ կազմակերպություններ	CSI	• Փորձագիտական կարողություններ	Հունիս 1, 2019 թ.

		մեխանիզմի բարելավվում • Առկա համակարգի ռիսկերի և կարիքների գնահատում				
		Նախնական գնահատման թերթիկի պատրաստում	Ցանցի անդամ կազմակերպություններ	CSI, PH	• Փորձագիտական կարողություններ	Դեկտեմբեր, 2019թ.
5	հասարակություն	Իրազեկում • Կայքի պատրաստում, • Սոցիալական կայքերում ցանցի էջի ստեղծում • Համապատասխան կոնտենտի պատրաստում, ըստ նախապես առանձնացված թիրախային խմբերի • Ստիկերների և այլ տպագիր/ ոչ տպագիր միջոցներով իրազեկման բարձրացում • Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ	Ցանցի անդամ կազմակերպություններ	CSI,	• IT ոլորտի մասնագետներ • Կոնտենտի պատրաստման համար անհրաժեշտ ռեսուրսներ • Տպագրություն • Համայնքային այցելությունների համար նյութական և տեխնիկական միջոցներ	Հուլիս, 2019 թ.
6	ընտանիք	Առկա ծրագրերում պրոբացիայի շահառուի ընտանիքի անդամների ներգրավվում	Ցանցի անդամ կազմակերպություններ	Ընտանիք և համայնք ՀԿ	• Ցանցի անդամ կազմակերպությունների ընթացիկ ծրագրեր	Ընթացիկ
7	Դոնոր համայնք	Դոնոր համայնքի հետ հանդիպումների կազմակերպում	Ցանցի անդամ կազմակերպություններ	CSI	Կազմակերպչական հմտություններ	Հունիս, 2019թ.

4. Շահերի պաշտպանության պլան

Թիրախ խումբ	**Ի՞նչ ենք ուզում ասել**	**Խնդրի լուծման հավանական ություն**	**Կոալիցիայի գործողություններ**
Միջազգային կառույցներ	Միջազգային ստանդարտների և պահանջների միջազգային փորձի ներկայացումը Պրոբացիայի ծառայության բարելավման աջակցությունը	միջին	Կապի հաստատում հանդիպումներ և քննարկումներ միջազգային կառույցների հետ, կոալիցիայի փորձագիտական ներուժի օգտագործումը, խնդիրների և կարիքների ձևակերպում ու հստակեցում կարիքից ելնելով
ԱԺ պետահիրավական հանձնաժողով	Պրոբացիայի օրենքի բարեփոխում, ոլորտային իրավական փոփոխություններ Քննարկումների և առաջարկությունների ներկայացման հնարավորություն	միջին	Նախագծերի մշակում, հանրային քննարկումներ, հանդիպումներ պատգամավորների հետ, պետահիրավական հանձնաժողովի ներկայացուցիչների
Դատավորներ Դատախազներ Ոստիկանություն	ՊՎԱ զեկույցի վրա հիմնվելը, դատարանի կողմից անկախ զեկույցի պահանջը պրոբացիայի ծառայողից, Կոնկրետ պայմանների առաջադրումը Պրոբացիա-ոստիկանություն համագործակցության համակարգային կարգավորումներ, ոստիկանության զգայունությունը պրոբանտների նկատմամբ	ցածր	Հանդիպումներ ԲԴԽ հետ, քննարկումներ առաննձին դատավորների հետ, կայացված որոշումների ուսումնասիրությունև վերլուծություն Համատեղ հանդիպումներ քրեական արդարադատության բոլոր օղակների ներկայացուցիչների միջև

Թիրախ խումբ	**Ի՞նչ ենք ուզում**	**Խնդրի լուծման հավանականություն**	**Կոալիցիայի գործողություններ**
Արդարադատության նախարարություն (Արդ՝ Դատի սուբյեկտներ)	• Պրոբացիայի կիրառման նոր տեսլականի մշակում • Պրոբացիայի Ֆունկցիոնալ	• Միջին • Բարձր • Միջին	• Պրոբացիայի աջակցման պլատֆորմի ստեղծում, որը կներառի ներկայացուցիչներ դատավորներ,

	ռազմավարության ստեղծում • Նոր ստեղծված Պրոբացիայի ռազմավարության միացում քրեակատարողական ծառայության ռազմավարության պլանին		դատախազներ, ոստիկանություն, փաստաբաններ • Տրամադրել միջազգային փորձագետներ, մասնագիտական կարողություններ, կոալիցիայի անդամ ՀԿ-ների մասնագիտական ներուժը։ • Օգտագործելով պրոբացիայի աջակցման պլատֆորմի, կոալիցիայի, ցանցի անդամ կազմակերպությունների ռեսուրսները իրականացնել ջատագովություն
Կառավարության աշխատակազմ			
ՊՊԾ			

5.PR առաջնահերթություններ և արշավներ

Իրազեկումը հիմնված է լինելու հետևյալ մարտավարության վրա.

Թիրախ խումբ	PR Մոտեցում/ մեթոդ
Էմոցիոնալներ/ սենտիմենտալներ	Հուզիչ պատմություններ՝ Video/ photo story telling
Խնայողություններ գնահատողներ	ինֆոգրաֆիկա
Կանայք	Երեխաների թիրախավորում, պատմություններ
Միջազգայնամոլներ	Միջազգային փորձ, Ինֆոգրաֆիկա

1. Տեղական դեպքեր (case), հաջողված պատմություններ
2. Միջազգային փորձ, հետազոտության արդյունքները
3. Ուղերձներ, համայնքային հանդիպումներ
4. Կայքեր, սոց-ցանցեր, սթիքերներ, պլակատներ, բրոշյուր, ֆոտո-ֆիլմ (story telling), ինֆոգրաֆիկա, անիմացիա
5. Բլոգ, մեդիա

6. Ֆոնդահայթայթում և Ցանցի զարգացման պլան

2019թ-ի մարտի 13-ին Աղվերանում կայացած «Աջակցություն պրոբացիային ազգային ցանց»-ի Կառավարման խորհրդի արտահերթ նիստի ժամանակ որոշվեց.

- Ցանցի անդամ բոլոր անդամ կազմակերպություններն իրավասու են կոալիցիայի անունից դիմել դրամաշնորհների;
- Կոալիցիայի անունից դրամաշնորհի դիմելու դեպքում, դիմողը պարտավոր է նախապես ստանալ Ցանցի Կառավարման խորհրդի համաձայնությունը;
- կոալիցիայի անունից շահած դրամաշնորհը կարող են իրականացնել Ցնացի միայն մի քանի անդամ՝ բոլոր անդամների մասնակցությունը պարտադիր նախապայման չի հանդիսանում;
- Կոալիցիայի անունից շահած գրանտն իրականցանող կազմակերպությունը (ները) պարտավոր են հաշվետվություններ ներկայացնել Կառավարման խորհրդին՝ ծրագրի գործողությունների ժամանակացույցին համապատասխան;
- Ցանցի անդամ բոլոր անդամ կազմակերպություններն իրավասու են դիմել դրամաշնորհի, որպես առանձին կազմակերպություն կամ կազմակերպությունների խումբ՝ նշելով, որ հանդիսանում են Ցանցի անդամ:

Ցանցի զարգացման և կարողություններն ուժեղացնելու նպատակով իրականացվելու են աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

Կոալիցիայի ֆինանսական միջոցների հայթայթման խմբի (համակարգողի), Հասարակական կապերի պատասխանատուի, ծրագրի ղեկավարի (ՔՀԻ նախագահի) և ծրագրի կոսորցիումի անդամ կազմակերպությունների ղեկավարների կողմից պարբերաբար հիմունքներով կատարվելու են ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքներ, որոնք կարող են տարվել հետևյալ ուղղություններով.

1. *Հայաստանում և արտերկրներում, գործող, ինչպես նաև ոլորտում ակտիվ դոնոր, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններին՝ Ծրագրի (կոալիցիայի) համաֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

2. *Միացյալ Նահանգներում, Եվրոպական Միությունում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում բնակվող հայ համայնքին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

3. *Հայաստանում գործող բիզնեսի ներկայացուցիչներին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

4. *ՀՀ կառավարության, կառավարության ծրագրերով նախատեսված ՔՀԿ սեկտորին տրամադրվող դրամաշնորհային հնարավորությունների օգտագործում,*

5. *ՏԻՄ բյուջեներից Ծրագրի առանձին գործողությունների համար ֆինանսավորում ստանալու հնարավորությունների օգտագործում,*

6. *Առցանց ֆինասավորման աղբյուրներ,*

7. *Այլ աղբյուրներ:*

7. Մշտադիտարկող խմբի ռազմավարական պլան

- Գնահատել, թե արդյոք ԱՆ-ն ապահովում է անհրաժեշտ երաշխիքներ, որ Պրոբացիայի պետական ծառայությունը պատշաճ վերահսկողություն իրականացնի այն անձանց նկատմամբ, ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, պատժի կրումից վաղաժամկետ ազատված, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ կրող անձանց նկատմամբ և շահառուներին տրամադրի անհրաժեշտ աջակցություն՝ կանխելով նրանց կողմից կրկնահանցագործությունը

Մեթոդներ՝

- կառուցվածքային հարցազրույցներ Պրոբացիայի պետական ծառայության շահառուների հետ,
- կիսակառուցվածքային հարցազրույցներ Պրոբացիայի պետական ծառայության ընտրված ծառայողների հետ,
- տվյալների վերլուծություն:

8. Ցանցի պրոբացիայի ոլորտի հանրային քաղաքականությունների մշտադիտարկման և բարելավման պլան

Վերականգնողական արդարադատությունը պետք է ապահովի իրավախախտներին՝ վերականգնվելու հնարավորությամբ, տուժողին՝ արդարությունը վերականգնելու հնարավորությամբ և հասարակությանը՝ անվտանգությամբ: Իսկ վերականգնողական արդարադատության կայացվածության գլխավոր ցուցանիշն իրավախախտին հասարակությանը վերաինտեգրվածության փաստն է և այնպիսի պայմանների երաշխիքը, որոնց դեպքում նա կկարողանա օրինապահ կյանք վարել:

Իսկ որքանով է իրավախախտում կատարած անձն վերափոխվել, վերաինտեգրվել կարելի է դատել երկրում կրկնահանցագործության ցուցանիշով:

Վերջին՝ 2018 թվականի նոյեմբերի 6-ին հայտարարված համաներումից հետո կրկնահանցագործության վերաբերյալ տվյալները (մարտի 22-ին առաջին փոխոստիկանապետ Արման Սարգսյանն Ազգային ժողովում նշել է, որ «628 անձ է համաներմամբ ազատվել, որից 66-ն արդեն կատարել է 121 հանցագործություն»), ինչպես նաև իրավապահ մարմնի ներկայացուցչի հայտարարությունն առ այն, որ

*«2018 թվականին 1200 անձի նկատմամբ չի կիրառվել կալանք, սակայն չկան տվյալներ, թե **նրանցից քանիսն են ազատության մեջ լավ վարք դրսևորում»**, վկայում են վերականգնողական արդարադատության ոլորտում համակարգային խնդիրների առկայության և համապարփակ քաղաքականության մշակման անհրաժեշտության մասին։*

Քաղաքացիական հասարակության ինստիտուտը (ՔՀԻ) 2018 թվականի ընթացքում նախաձեռնել և կազմակերպել է հանդիպումների շարք, որոնց ընթացքում քրեակատարողական ծառայության ներկայացուցիչները, քրեակատարողական հիմնարկների ղեկավարները և աշխատակիցները, Պրոբացիայի ծառայության ղեկավարը և աշխատակիցները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, դասախոսներ քննարկել են դատապարտյալների վերասոցիալականացումը, առկա խնդիրները, մարտահրավերները և հնարավոր լուծումները։

Քննարկումների ընթացքում մասնավորապես արծարծվել են հետևյալ թեմաները.

- **Դատապարտյալի ուղղումը/ուղղորդումը**

«Դատապարտյալին պետք է ձեռքից բռնած ուղղորդենք/ուղեկցենք»
փորձագետ

Դատապարտյալի ուղղումը պետք է սկսվի հիմնարար նշանակություն ունեցող ամենակարևոր և առաջնային գործողությունից, այն է՝ դատապարտյալի ռիսկերի և կարիքների, թույլ և ուժեղ հատկանիշների գնահատում, որոնց վրա և պետք է խարսխվի հետագա վերականգնողական ամբողջ աշխատանքը։

Դատապարտյալի վերականգնման համար կենսական նշանակություն ունեն այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են ընտանիքի հետ կապը, շրջապատը, անձի հոգեսոցիալական կարգավորումը, որոնք այսօր անտեսված են, հաշվի չեն առնվում։

Համաձայն ՀՀ Արդարադատության նախարարի 30 մայիսի 2008 թ.-ի թիվ 44-Ն հրամանի՝ անձի հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները պետք է սկսվեն քրեակատարողական հիմնարկ (ՔԿՀ) մուտք գործելու առաջին վայրկյանից և կազմակերպվեն 3 փուլով՝ նախնական, ընթացիկ և ավարտական։ Ինչպես վկայում են պրակտիկան և փորձագետները՝ ինչ-որ աշխատանքներ **սկսվում են** ավարտական փուլում։ Ամբողջ աշխատանքը փաստացի ձևական բնույթ է կրում։ Անգամ այդ ավարտական փուլը հաշվարկվում է դատապարտյալի պատժի օրացուցային ժամկետով, մինչդեռ դրա իրական նպատակը պետք է լինի դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատմանը (ՊՎԱ) նախապատրաստելը։ Դատապարտյալի հետ աշխատանքները պետք է նրան նախապատրաստեն ազատության մեջ կյանքին, ինչը, ի թիվս այլնի, նշանակում է նաև ռեժիմի աստիճանական թուլացման ընթացակարգ։

Դատապարտյալի վերականգնման ծրագրերի հաջող իրականացման համար անհրաժեշտ է ապահովել բոլոր շահագրգիռ գերատեսչությունների՝ Արդարադատության նախարարության՝ ի դեմս քրեակատարողական ծառայության, այլ նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ոստիկանության, Պրոբացիայի ծառայության, տարածքային կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջև համագործակցությունը և համատեղ աշխատանքը:

- **Դատապարտյալի զբաղվածությունը**

Վերականգնողական արդարադատության ոլորտում միջազգային փորձը ցույց է տալիս, որ ուղիղ կապ կա զբաղվածության և կրկնահանցագործության նվազման միջև: Ավելին, անգործությունը մեծացնում է հանցանք գործելու հավանականությունը, ինչը նշանակում է, որ աշխատանք գտնելն իրավախախտի կյանքում շրջադարձային պահ է: Այսպիսով, պատիժը կրելու ընթացքում վերապատրաստման և աշխատելու հնարավորությունը կարևորագույն հանգամանք է:[1]

Ընդհանուր առմամբ առկա են մի շարք գործոններ, որոնք մեծապես սահմանափակում են դատապարտյալների՝ զբաղվածության և եկամուտներ ստանալու հնարավորությունները: Դրանք են՝ անավարտ կրթությունը, ոչ բավարար մասնագիտական հմտությունները, աշխատանքային փորձի պակասը և մոտիվացիան: Ազատազրկման դեպքում, հատկապես երկարատև, դատապարտյալները դուրս են մնում աշխատաշուկայից և զրկվում են տնտեսական գործունեություն զարգացնելու հնարավորությունից, ինչը հանգեցնում է փորձի, հմտությունների, վերապատրաստման կարողությունների և գործատուների հետ կապի կորստի:[2]

Հայաստանի ՔԿՀ-ներում դատապարտյալների զբաղվածությունն ապահովող որոշակի պայմաններ ստեղծվել և ստեղծվում են (օրինակ՝ կարի արհեստանոց «Աբովյան» ՔԿՀ-ում): 2018 թվականի ՔՀԻ-ի կողմից ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում վեցամսյա մասնագիտական դասընթացներ են կազմակերպվել (հելյունագործության/գորգագործության, վարսահարդարման, անգլերենի, համակարգչային հմտությունների, այդ թվում գրքերի և ամսագրերի թվայնացման, բիզնես կառավարման և մի քանի այլ ուղղություններով: Արդյունքում այդ դասընթացներից որոշները շարունակում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը («Կենտրոն» ՊՈԱԿ): Ավելին, դասընթացները կազմակերպվում են ոչ միայն «Աբովյան» ՔԿՀ-ում, այլ նաև այլ «Արմավիր» ՔԿՀ-ում, ինչպես նաև Պրոբացիայի շահառուների համար:

Թվայնացման հմտություններն արդեն իսկ հնարավորություն են ընձեռել կանանց գումար աշխատել, իսկ հելյունագործության/գորգագործության հմտությունները պահանջված են, օրինակ, Գորիսի Կանանց Զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի կողմից, որի հետ համագործակցությունը շարունակվում է նաև ծրագրի ավարտից հետո:

ՔՀԻ-ի կողմից նույն ծրագրի շրջանակներում դատապարտյալների համար կազմակերպվել էին նաև յոգայի և ֆիթնեսի դասընթացներ՝ խթանելով կանանց շրջանում առողջ ապրելակերպի գաղափարը:

Դասընթացները մեծ ոգևորությամբ են ընդունվել նաև դատապարտյալների կողմից, որոնք մեծ շահագրգռվածությամբ էին մասնակցում այդ դասընթացներին՝ հույս ունենալով ազատվելուց հետո «գտնել իրենց այդ ոլորտներում»:

---

[1] Shoham, Efrat, Zelig, Anat, Hesis,i Badi, The "Black Box" Behind Prison-Based Vocational Training Programs, European Scientific Journal April 2017 /SPECIAL/ edition, p. 433

[2] Դատապարտվածների շրջանում զբաղվածությունը և եկամուտներ ստանալու հնարավորությունները սահմանափակող գործոնները: Հասանելի է http://csi.am/hy/point-of-view/2017/01/18/probation

Այսպիսով, պատժի կրման ընթացքում անցկացվող դասընթացներն ապագա սոցիալական վերաինտեգրման հիմքեր նախապատրաստող կարևորագույն գործիքներ են, որոնք կարող են օգնել ազատության պատրաստվող դատապարտյալներին՝ ստանալու պահանջարկ ունեցող մասնագիտություն և կայուն եկամտի աղբյուր:

Սակայն դասընթացներ, եթե անգամ կազմակերպվում են, կազմակերպում են մի քանի ՔԿՀ-ներում և այն էլ ոչ պարբերաբար: Օրինակ՝ ինչպես փաստում են «Կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները՝ Զբաղվածության պետական գործակալության հայտարարած՝ ՔԿՀ-ներում դասընթացների կազմակերպման տենդերի չափանիշներին երկրում ոչ մի կազմակերպություն չի բավարարում, նույնիսկ իրենց Կենտրոնը, այն դեպքում երբ տենդերում նշված գործողությունները վերջինիս անմիջական գործառույթներն են:

Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դատապարտյալները հազվադեպ են հնարավորություն ունենում մասնակցելու վերապատրաստումների և դասընթացների: Խոչընդոտները բազմաթիվ են: Օրինակ՝ Զբաղվածության պետական գործակալությունը նման դասընթացներ չի անցկացնում, որովհետև սահմանափակված է դասընթացին մասնակցողների առնվազն 50%-ին դասընթացի ավարտից հետո աշխատանքով ապահովելու պարտավորությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների մեծ մասը դասընթացի ավարտից հետո շարունակում են մնալ ՔԿՀ-ներում, որտեղ աշխատատեղերը խիստ սահմանափակ են՝ նմանօրինակ պահանջը հեռու է իրատեսական լինելուց: Խնդիր է նաև գործատուների բացասական վերաբերմունքը նախկին դատապարտյալների հանդեպ, իսկ օտարերկրյա քաղաքացիները ընդհանրապես զրկված են պատժի կրման ընթացքում աշխատելու իրավունքից՝ պայմանավորված օրենքի խոչընդոտների ուժով: Նշված խնդիրներն իրավական կարգավորման դաշտում են:

Դասընթացների արդյունավետության համար կարևոր է նաև դատապարտյալների մոտիվացիան, մասնակցության ցանկությունը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան և փաստում են փորձագետներն այդ նպատակի ապահովման համար անհրաժեշտ է

ա) ապահովել դասընթացների նպատակայնությունը, այն է՝ պետք է պատրաստվեն ոլորտի մասնագետներ: Օրինակ՝ վարսավիրներ, գորգագործներ, խաղալիք պատրաստողներ, թվայնացման մանագետներ և այլն: Դասընթացները, անշուշտ, կարևոր են, սակայն վերացական հմտությունները, որոնք պահանջարկ չունեն շուկայում կամ հասու չեն տվյալ անձին, հետագա զբաղվածության ապահովման համատեքստում արդյունավետ չեն

բ) ապահովել աշխատանքի հնարավորություններ ՔԿՀ-ներում

գ) որդեգրել խրախուսման քաղաքականություն: Օրինակ՝ հաջող մասնակցությունը դիտարկվի վաղաժամկետ ազատման պայման, իսկ ազատվելուց հետո ապահովվեր Պրոբացիայի շրջանակում ուսումը շարունակելու հնարավորություն

դ) խրախուսել բիզնես շրջանակի ներգրավումը դատապարտյալների զբաղվածության ապահովման համատեքստում

ե) մշակել և ներդնել դասընթացներ՝ դրանց արդյունավետության պարբերական գնահատման պարտադիր բաղադրիչով:

- **Ֆորմալ թղթաբանություն**

Դատապարտյալի ուղղման շղթայի բոլոր օղակներն ունեն պարտադիր հաշվետվությունների ձևեր, որոնք հեռու են նպատակային, թիրախավորված տեղեկություն հավաքելու գործիքներ լինելուց և իրենցից ներկայացնում են ծայրաստիճան ժամանակատար գրագրության համակարգ: Հավաքված տեղեկատվությունը չի օգտագործվում վիճակագրական վերլուծությունների իրականացնելու և ոլորտը բարելավելու նպատակով: Արդյունքում իրական շահառուն՝ մարդը, դուրս է մնում պետության ուշադրության դաշտից՝ իր կենտրոնական դերը զիջելով գրագրությանը:

Այսպիսով, դատապարտյալների վերասոցիալականացման արդյունավետ մեխանիզմի ստեղծմանն ուղղված քայլերն անհրաժեշտ է սկսել ընդհանուր նպատակի, այն է՝ կրկնահանցագործության կանխարգելման շուրջ պատկան մարմինների համախմբմամբ՝ հստակ առանձնացնելով հիմնական դերակատարների պարտավորությունները, ինչպես նաև սահմանելով վերջիններիս աշխատանքի արդյունավետության գնահատման որակական և քանակական չափորոշիչները:

- **Հաշտարարություն**

Վերականգնողական արդարադատության հիմնական բաղադրիչ է նաև հաշտարարությունը: Անվտանգ հասարակության համար կարևոր նշանակություն ունի իրավախախտի և տուժողի միջև հաշտեցումը: Օրինակ՝ վերջին համաներմամբ դեպքից ընդամենը 8 ամիս անց ազատ է արձակվել մեկ տարեկան երեք ամսեկան երեխայի մահվան ելքով ավարտված ավտովթարի մեղավորը: Այդ փաստը հարուցել է երեխայի ծնողների վրդովմունքը, սոցցանցերը ողողված էին ատելության խոսքով: Եվ եթե այս դեպքում ծնողները սահմանափակվել են միայն վրդովմունքը սոցկայքերում արտահայտելով՝ 2016 թվականին երեխային մահվան ելքով վրաերթի ենթարկած վարորդի նկատմամբ երեխայի հայրը վրեժխնդրության շարժառիթով սպանության փորձ է կատարել[3]:

[3] Տե՛ս Գործ համար ԿԴ2/0081/01/16, դատական տեղեկատվական համակարգ, www.datalex.am